ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
ОБЛАСТЬ ЛОРИ
МЭРИЯ Г. ТАШИР
МЭР

ք. Տաշիր, քաղաքային հրապարակ
հեռ. 2-22-41,2-25-77

г. Ташир, городская площадь
тел.2-22-41,2-25-77

N 917 -18
*08 հունիս 2018թ.*

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան,

ուղարկվում են Տաշիր համայնքի ղեկավարի՝ թիվ 518-524-Ա որոշումները:

Առդիր՝ 8 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

*Կատ.՝ Նունե Սոլոյան*
*Հեռ.՝ (0254) 2-22-41*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻԻ ՄԱՐԶ

# ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-518-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*01 հունիս 2018թ.*

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությա նօրենքի 35-րդ, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով <<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/45>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2018թ. մայիսի 17-ի N 3 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ Կառավարության 2018թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվությա նչստացման դեպքում մասնակցիներ կայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող և «Էքսպրես Շին»ՍՊԸ-ի կողմից պայմանագրի կատարման ապահովումը սահմանված ժամկետում ներկայացվել է՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի Կարիքների համար լուսավորության ապրանքների մատակարարման <<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/45>> ծածկագրով գնման պայմանագիր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-519-Ա

---

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*05 հունիս 2018թ.*

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005 թ. N2387 Ն որոշումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տաշիր համայնքի տարածքում գտնվող Գագիկ Սմբատի, Լիյա Հակոբի, Կարեն Գագիկի, Կարինե Գագիկի Շվոյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակարանին (վկայական 1725765, տրված 31.08.2005) << Լոռու մարզ, քաղաք Տաշիր, Լենինի փողոց, մաս. թիվ 19, բնակարան 11 հասցեի փոխարեն տալ << Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 7, Վ. Սարգսյան փողոց, բ/շ 19, բնակարան 11 հասցեն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդ օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌԻԻ ՄԱՐԶ
# ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-520-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*06 հունիս 2018թ.*

**ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավար ության 29.12.2005 թ. N2387 Ն որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Ասկար Շագոյի Սուլեյմանովին, Սեյրան Ուսուբի Սուլերմանովին, Ջանգի Ասքյարի Սուլերմանովին, Թինա Ասքյարի Սուլերմանովին, Վեներա Ասքարի Սուլերմանովին համատեղ սեփականության իրավունքով պատկանող,/ հիմք՝ սեփականության իրավունքի թիվ 1776433 վկայական / բնակելի տանը ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր,Ն. Ստեփանյան փողոց, թաղամաս 11, թիվ 23ա հասցեի փոխարեն տալ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 11, Ն. Ստեփանյան փողոց, թիվ 23/1 բնակելի տուն հասցեն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-521-Ա**

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41
*06 հունիս 2018թ.*

## ԻՆՔՆԱԿԱՄԿԱՌՈՒՅՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 35 կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով Տաշիր համայնքի ավագանու 31.05.2018թ. թիվ 45-Ա որոշումը, քաղաքացի Գևորգ Սերգեյի Սիմիկյանի /անձ. AG0225122/ դիմումը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06032018-06-0040 վկայականը և այն, որ 348,5քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա 72,81ք.մ. մակերեսով կառուցված բնակելի տունը, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գևորգ Սիմիկյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն ճանաչված Երևանյան փողոց, թաղամաս 4, թիվ 22/3-1 հասցեում գտնվող 348,5քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա 72,81ք.մ. մակերեսով կառուցված բնակելի տունը 1ք/մ 1650 /հազար վեց հարյուր հիսուն/ ՀՀ դրամով՝ ընդամենը՝ 120150 /հարյուր քսան հազար հարյուր հիսուն/ դրամ արժեքով ուղղակի վաճառքի կարգով օտարել ինքնակամ կառույցը իրականացնողին:

2. Ինքնակամ զբաղեցրած 348,5ք․մ․հողամասի համար կառուցապատող Գևորգ Սիմիկյանից գանձել հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 77370 /յոթանասուն յոթ հազար երեք հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ:
3․ Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:
5. Գևորգ Սերգեյի Սիմիկյանի հետ կնքել օրենքով սահմանված առք ու վաճառքի պայմանագիր:
6․ ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր Տաշիր ք․ Երևանյան փողոց 4-րդ թաղամաս 22/3-1 հասցեի փոխարեն տալ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք. ք․ Տաշիր, Երևանյան փողոց ,1-ին թաղամաս, թիվ 22/3-1 բնակելի տուն հասցեն:
7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ TASHIR MUNICIPALITY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ

# ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-522-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*07 հունիս 2018թ.*

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով <<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/50>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2018թ. մայիսի 31-ի N 3 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ Կառավարության 2018թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում կոմիտեից ստացված դրական եզրակացությունը և այն, որ «Տրանս Շին» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի կատարման ապահովումը սահմանված ժամկետումներ կայացվել է.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Տրանս Շին» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար գրունտային ճանապարհների նորոգման աշխատանքների կատարման պայմանագիր <<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/50>> ծածկագրով գնման պայմանագիր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-523-Ա

---

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*08 հունիս 2018թ.*

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին և 3-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35- րդ հոդվածի 16-րդ կետով, 2001թ. ապրիլի2-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> 286 որոշման 6-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով, որ համանքային սեփականություն հանդիսացող հողամասը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով և այն, որ հողամասի չափը չի գերազանցում սեփականության իրավունքով ձեռքբերված հողամասի չափերը և հիմք ընդունելով 2018թ. մայիսի 31-ի <<Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> N 44-Ա համայնքի ավագանու որոշումը, քաղաքացի Արևիկ Դոլգյազի Ավդալյանի /անձ. AM0495990/ դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19042018-06-0040 վկայականը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 6-րդ թաղամաս, Ջահուկյան փողոց 10/1-1 հասցեում գտնվող 06-008-0103-0126 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 17,9ք.մ. մակերեսով հողամասը ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով 3980 ՀՀ դրամով կադաստրային արժեքով օտարել Արևիկ Ավդալյանին:
2. Արևիկ Ավդալյանի հետ կնքել օրենքով սահմանված կարգով հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթա կա են գրանցմանը ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-524-Ա**

---

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*08 հունիս 2018թ.*

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թ. N2387 Ն որոշումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Արմինե Գասսիևա-Սոլոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանին (հիմք սեփականության վկայական թիվ 30062015-06-0026, տրված՝ 30/06/2015թ.) ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր, Դպրոցականների փողոց, 10 շենք, 23 բնակարան հասցեի փոխարեն տալ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 9, Դպրոցականների փողոց, բ/շ-10, 23 բնակարան:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**